**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 35-Ա

Արթիկ համայնք 09 հուլիսի 2020թվականի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 9-Ի N 8 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2016թվականի նոյեմբերի 30-ի թիվ 54-Ն որոշմամբ ընդունված կանոնակարգի 4-րդ կետի 4-րդ ենթակետով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

***Հաստատել նիստի հետևյալ օրակարգը***

1. <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու և տնօրեն նշանակելու մասին:/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2020 թվականի հունիսի 30-ի թիվ 34-Ն որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
3. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի թիվ 60-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
4. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը ի գիտություն ընդունելու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/
5. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային հաշվեկշռին համաձայնություն տալու մասին:
/զեկուցող՝ Արթիկ համայնքի ղեկավար Մխիթար Վարագյան/

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Վարդանյան Ոսկան | Հակոբյան Տարոն |
| Ղուլիջօղլյան Ռաֆիկ | Մկրտչյան Մուշեղ |
| Վարագյան Մեսրոպ | Աբրահամյան Ալեքսան |
| Նիկողոսյան Արմեն | Հակոբյան Հարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,
2020թվականի 09 հուլիսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 36 -Ն

ք. Արթիկ 09 հուլիսի 2020թ.

---

<<ԱՐԹԻԿԻ ԱՐԵՎԱՅԻՆ ԷԼԵԿՏՐԱԿԱՅԱՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՏՆՕՐԵՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի 108-րդ և 110-րդ հոդվածների դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ, 16-րդ և 28-րդ կետերով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 1-ի <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին>> թիվ 187-Ա որոշումը, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի 2020 թվականի հուլիսի 1-ի <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն ստեղծելու մասին>> թիվ 187 -Ա որոշումը:
2. Ստեղծել <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերություն:
3. <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը սահմանել 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ

1) <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալի չափը կազմում է 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ, որը կազմում է 10 (տասը) հատ հասարակ (սովորական) անվանական բաժնետոմս, մեկ բաժնետոմսի անվանական արժեքը կազմում է 10.000 (տասը հազար) Հայաստանի Հանրապետության դրամ: Բոլոր 10 (տասը) բաժնետոմսերը տեղաբաշխված են բաժնետերերի միջև և լրիվ վճարված են նրանց կողմից:

2) Հաստատել <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրական կապիտալը 100.000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

3) <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի խորհրդի անդամներ ընտրել՝

ա. Մխիթար Նորիկի Վարագյան-(Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավար) -խորհրդի նախագահ

բ. Արտակ Մանվելի Գրիգորյան-Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար- խորհրդի անդամ

գ. Տաթևիկ Թաթուլի Աղաքարյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի քարտուղարության բաժնի գլխավոր մասնագետ-իրավաբան-խորհրդի անդամ

դ. Ոսկան Հովհաննեսի Վարդանյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ- խորհրդի անդամ

ե. Հարություն Հովհաննեսի Հակոբյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ- խորհրդի անդամ

4) <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության վերստուգող հանձնաժողովի կազմում ընտրել 3 /երեք հոգի/՝

ա. Մարիամ Սեյրանի Փանոյան – Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր մասնագետ-հաշվապահ-խորհրդի նախագահ

բ. Ռաֆիկ Գառնիկի Ղուլիջօղլյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու անդամ- խորհրդի անդամ

գ. Հովհաննես Գևորգի Կարախանյան- Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկի համայնքապետարանի ֆինանսատնտեսագիտական բաժնի գլխավոր առաջատար մասնագետ-խորհրդի անդամ

4. Հաստատել <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
5. Համաձայնություն տալ համայնքի ղեկավարի ներկայացրած առաջարկությանը <<Արթիկի արևային էլեկտրակայան» փակ բաժնետիրական ընկերության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար նշանակելու Գևորգ Փայլակի Փթուկյանին (անձնագիր՝ AM 0466337, տրված 12.10.2011թ. 028-ի կողմից, հաշվառված ք. Արթիկ, Տերյան 5):
6. Աշխատավարձի չափ սահմանել՝ 100000 (մեկ հարյուր հազար) Հայաստանի Հանրապետության դրամ:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Վարդանյան Ոսկան | Հակոբյան Տարոն |
| Ղուլիջօղլյան Ռաֆիկ | Մկրտչյան Մուշեղ |
| Վարագյան Մեսրոպ | Աբրահամյան Ալեքսան |
| Նիկողոսյան Արմեն | Հակոբյան Հարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ

ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ________________ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.

Արթիկ համայնք,

2020թվականի 09 հուլիսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
## ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 37 -Ն

ք. Արթիկ 09 հուլիսի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 30-Ի ԹԻՎ 34-Ն ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության մասին օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով

**ՈՐՈՇՈՒՄ ԵՄ**

1. Ուժը կորցրած ճանաչել Արթիկ համայնքի ավագանու 2020թվականի հունիսի 30-ի թիվ 34-Ն որոշումը՝ <<Արթիկի արևային էլեկտրակայան>> փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը հաստատելու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման հաջորդ օրը:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան

Ղուլիջօղլյան Ռաֆիկ

Վարագյան Մեսրոպ

Նիկողոսյան Արմեն

Հակոբյան Տարոն

Մկրտչյան Մուշեղ

Աբրահամյան Ալեքսան

Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի 09 հուլիսի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 38 -Ն

ք. Արթիկ 09 հուլիսի 2020թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի ԹԻՎ 60-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 83-րդ հոդվածի 2-րդ մասով, 90-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 6-րդ մասերով, <<Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին, 4-րդ և 5-րդ մասերով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 26-ի <<Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի բյուջեն հաստատելու մասին>> թիվ 60-Ն որոշման մեջ բյուջեի ծախսային մասում կատարել հետևյալ փոփոխությունները

1) Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ բաժնի

ա/ <<Մասնագիտական ծառայություններ>> (4241) հոդվածում գրված <<1000000 մեկ միլիոն>> թիվը և բառերը փոխարինել <<1500000 մեկ միլիոն հինգ հարյուր հազար >> թվով և բառերով:

բ/ <<Պարտադիր վճարներ>> (4823) հոդվածում գրված <<400000 չորս հարյուր հազար>> թիվը և բառերը փոխարինել <<700000 յոթ հարյուր հազար >> թվով և բառերով:

2) ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ բաժնի <<Պահուստային միջոցներ>> (4891) հոդվածում գրված <<74348880 յոթանասունչորս միլիոն երեք հարյուր քառասունութ հազար ութ հարյուր ութանասուն>> թիվը և բառերը փոխարինել <<73548880 յոթանասուներեք միլիոն հինգ հարյուր քառասունութ հազար ութ հարյուր ութանասուն>> թվով և բառերով:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Վարդանյան Ոսկան | Հակոբյան Տարոն |
| Ղուլիջօղլյան Ռաֆիկ | Մկրտչյան Մուշեղ |
| Վարագյան Մեսրոպ | Աբրահամյան Ալեքսան |
| Նիկողոսյան Արմեն | Հակոբյան Հարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ____________ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք, 2020թվականի 09 հուլիսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 39 -Ա

ք. Արթիկ 09 հուլիսի 2020թ.

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ 2-րդ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՂՈՐԴՈՒՄԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի 2020 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման վերաբերյալ հաղորդումը ընդունել ի գիտություն /համաձայն հավելվածի/:

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***
**Կողմ՝ 8**

Վարդանյան Ոսկան — Հակոբյան Տարոն

Ղուլիջօղլյան Ռաֆիկ — Մկրտչյան Մուշեղ

Վարագյան Մեսրոպ — Աբրահամյան Ալեքսան

Նիկողոսյան Արմեն — Հակոբյան Հարություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ______________ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի 09 հուլիսի

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ 40-Ա

ք. Արթիկ 09 հուլիսի 2020թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 1-Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի << Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին>> N 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանին

ՈՐՈՇՈՒՄ Է՛

Համաձայնվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ղեկավարի կողմից կազմված 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ Արթիկ համայնքի հողային հաշվեկշռին՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների (համաձայն հողային ֆոնդի հաշվետվության ձևի):

***Նիստին ներկա էին Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Արթիկ համայնքի ավագանու 8 անդամներ՝***

***Կողմ՝ 8 դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0***

**Կողմ՝ 8**

| | |
|---|---|
| Վարդանյան Ոսկան | Հակոբյան Տարոն |
| Ղուլիջօղլյան Ռաֆիկ | Մկրտչյան Մուշեղ |
| Վարագյան Մեսրոպ | Աբրահամյան Ալեքսան |
| Նիկողոսյան Արմեն | Հակոբյան Հարություն |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ
ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ __________ ՄԽԻԹԱՐ ՎԱՐԱԳՅԱՆ

Կ. Տ.
Արթիկ համայնք,
2020թվականի 09 հուլիսի

Ձև 22

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

հողային ֆոնդի առկայության և բաշխման (ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության և սեփականության սուբյեկտների)

առ 01.07.2020թ.

| | | | |
|---|---|---|---|
| Մարզ | ՇԻՐԱԿ /անվանում/ | 8 /Կոդ*/ | |
| Համայնք | ԱՐԹԻԿ /անվանում/ | 595 /Կոդ*/ | |

| h/h | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը, գործառնական նշանակությունը | Ծածկագիր | Ընդամենը (2+3+4+8+12) | Սեփականության սուբյեկտ | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | ՀՀ քաղաքացիների | ՀՀ իրավաբանական անձանց | համայնքային | | | | պետական | | | | Օտարերկրյա ... |
| | | | | | | | Ընդամենը (5+6+7) | Տրված մշտական օգտագործման | տրված վարձակալության | չտրված օգտագործման և վարձակալության | Ընդամենը (9+10+11) | Տրված մշտական օգտագործման | տրված վարձակալության | չտրված օգտագործման և վարձակալության | |
| | ա | բ | գ | 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| 1.1 | 1. Գյուղատնտեսական | վարելահող | | 718.45 | 615.84 | | 102.61 | | 95.17 | 7.44 | | | | | |
| 1.2 | | բազմ. տնկարկներ | | 0.57 | 0.57 | | | | | | | | | | |
| 1.2.1 | | այդ թվում պտղ. այգի | | | | | | | | | | | | | |
| 1.2.2 | | խաղողի այգի | | | | | | | | | | | | | |
| 1.2.3 | | այլ բազմամյա | | | | | | | | | | | | | |
| 1.3 | | խոտհարք | | 93.33 | | | 93.33 | | 70.15 | 23.18 | | | | | |
| 1.4 | | արոտ | | 1060.12 | | | 1060.12 | | 505.49 | 554.63 | | | | | |
| 1.5 | | այլ հողատեսքեր | | 96.42 | | | 96.42 | | | 96.42 | | | | | |
| 1 | | Ընդամենը | | 1968.90 | 616.42 | 0 | 1353.23 | | 670.81 | 682.42 | | | | | |
| 2.1 | 2. Բնակավայրերի | բնակելի կառույց | | 252.83 | 231.59 | | 21.24 | | 0.07 | 21.17 | | | | | |
| 2.1.1 | | այդ թվում՝ տնամերձ | | 226.13 | 226.13 | | | | | | | | | | |
| 2.1.2 | | այգեգ-ն /անառ-ն/ | | | | | | | | | | | | | |
| 2.2 | | հասարակ. կառույց | | 31.71 | 1.465 | 1.15 | 20.31 | | 0.01 | 20.30 | 8.78 | 7.14 | | 1.64 | |
| 2.3 | | խառը կառուցապ | | 0.79 | 0.37 | 0.34 | 0.08 | | 0.07 | 0.01 | | | | | |
| 2.4 | | ընդh. օգտագ. | | 45.83 | | | 45.83189 | | | 45.83189 | | | | | |
| 2.5 | | այլ հողեր | | 246.95 | 2.04 | | 244.91 | | | 244.91 | | | | | |
| 2 | | Ընդամենը | | 578.11 | 235.46 | 1.49 | 332.40 | | 0.15 | 332.25 | 8.78 | 7.14 | | 1.64 | |
| 3.1 | 3.Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական | արդյունաբ | | 59.81 | | 37.24 | 22.57 | 0.8 | 10.36 | 11.45348 | | | | | |
| 3.2 | | գյուղատնտ. արտադ. | | 29.43 | 3.20 | 4.394 | 21.84 | | 2.90 | 18.94 | | | | | |
| 3.3 | | պահեստարանների | | 19.50 | | | 19.50 | | | 19.50 | | | | | |
| 3.4 | | ընդերք օգտագործ. | | 292.17 | | | | | | | 292.17 | 3.00 | 289.17 | | |
| 3 | | Ընդամենը | | 400.9173 | 3.20 | 41.63 | 63.91 | 0.8 | 13.26 | 49.89 | 292.17 | 3.00 | 289.17 | | |
| 4.1 | 4. Էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների | էներգետիկայի | | 1.02 | 0.03 | | 0.99 | | 0.05 | 0.94 | | | | | |
| 4.2 | | կապի | | 0.48 | | | 0.48 | | | 0.48 | | | | | |
| 4.3. | | տրանսպորտի | | 15.94 | | | 3.63 | | | 3.63 | 12.31 | | | 12.3 | |
| 4.4 | | կոմուն. ենթակառ. | | 9.29 | | | 9.29 | | 1.00 | 8.29 | | | | | |
| 4 | | Ընդամենը | | 26.72 | 0.03 | 0.00 | 14.38 | | 1.04 | 13.34 | 12.31 | | | 12.3 | |
| 5.1 | 5. Հատուկ պահպանվող տարածքների | բնապահպ. | | | | | | | | | | | | | |
| 5.1.1 | | այդ թվում՝ արգելոց | | | | | | | | | | | | | |
| 5.1.2 | | արգելավայրեր | | | | | | | | | | | | | |
| 5.1.3 | | ազգային պարկ | | | | | | | | | | | | | |
| 5.2 | | առողջարարակ. | | | | | | | | | | | | | |
| 5.3 | | հանգստի | | 7.74 | | | 7.74 | | | 7.74 | | | | | |
| 5.4 | | պատմ. և մշակ. | | 22.10 | | | 12.42 | | | 12.42 | 9.68 | | | 9.68 | |
| 5 | | Ընդամենը | | 29.84 | | | 20.16 | | | 20.16 | 9.68 | | | 9.68 | |
| 6 | 6. Հատուկ նշանակության | Ընդամենը | | 100.10 | | | | | | | 100.10 | | | 100 | |
| 7.1 | 7. Անտառային | անտառ | | 597.35 | | | | | | | 597.35 | | | 597 | |
| 7.2 | | թփուտ | | | | | | | | | | | | | |
| 7.3 | | վարելահող | | | | | | | | | | | | | |
| 7.4 | | խոտհարք | | | | | | | | | | | | | |
| 7.5 | | արոտ | | | | | | | | | | | | | |
| 7.6 | | այլ հողեր | | | | | | | | | | | | | |
| 7 | | Ընդամենը | | 597.35 | | | | | | | 597.35 | | | 597 | |
| 8.1 | 8. Ջրային | գետեր | | 48.36 | | | | | | | 48.36 | | | 48.4 | |
| 8.2 | | ջրամբարներ | | | | | | | | | | | | | |
| 8.3 | | լճեր | | | | | | | | | | | | | |
| 8.4 | | ջրանցքներ | | | | | | | | | | | | | |
| 8.5 | | հիդ. և ջր. այլ օբ. | | 0.45 | | | 0.45 | | | 0.45 | | | | | |
| 8 | | Ընդամենը | | 48.81 | | | 0.45 | | | 0.45 | 48.36 | | | 48.4 | |
| 9.1 | 9. Պահուստային | աղուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.2 | | ավազուտներ | | | | | | | | | | | | | |
| 9.3 | | ճահիճներ | | | | | | | | | | | | | |
| 9.5 | | այլ անօգտ. հողեր | | | | | | | | | | | | | |
| 9 | | Ընդամենը | | | | | | | | | | | | | |
| Ընդամենը հողեր /1+2+3+4+5+6+7+8+9/ | | | | 3750.74 | 855.11 | 43.1 | 1784.53 | 0.8 | 685.3 | 1098.51 | 1068.8 | 10.14 | 289.2 | 769 | |

Համայնքի ղեկավար
ստորագրություն կնիք

ՀՀ ԿԱԱԳԿ պետական կոմիտեի
սպասարկման գրասենյակի պետ
ստորագրություն կնիք